

## ԼԱ ԿԱՆՅԱԴԱ ՖԼԻՆՏԻՉ ՔԱՂԱՔ

### ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ՍՈՒՅՆՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Ե ԾԱՆՈՒՑՈՒՄ**, որ 2026 թվականի հունիսի 2-ին, երեքշաբթի օրը, Լա Կանյադա Ֆլինտրիջ քաղաքում կանցկացվեն քաղաքային ընդհանուր ընտրություններ հետևյալ պաշտոնյաների համար՝

Քաղաքային խորհրդի  
երկու (2) անդամի համար

Չորս (4) տարի լրիվ ժամկետով

Այս պաշտոնների համար առաջադրումների ժամկետը սկսվում է 2026 թվականի փետրվարի 9-ին, երկուշաբթի օրը և ավարտվում է 2026 թվականի մարտի 6-ին, ուրբաթ, ժամը 17:00-ին:

Եթե քաղաքի գործող պաշտոնատար անձի առաջադրման փաստաթղթերը չեն ներկայացվում մինչև 2026 թվականի մարտի 6-ը, ուրբաթ օրը, ընտրողները մինչև 2026 թվականի մարտի 11-ը, չորեքշաբթի, ժամանակ ունեն այդ պաշտոնատար անձի ընտրովի պաշտոնի համար առաջադրելու թեկնածուներ, բացի այն անձից (անձանցից), ովքեր պաշտոնավարում էին ընտրություններից 88-րդ օրը: Այս երկարաձգումը կիրառելի չէ, եթե ընտրվելու իրավունք ունեցող պաշտոնատար անձ չկա:

Եթե ընտրովի պաշտոնի համար ոչ ոք կամ միայն մեկ անձ է առաջադրվում, ընտրովի պաշտոնում նշանակումը կարող է կատարվել Կալիֆոռնիայի նահանգի ընտրական օրենսգրքի § 10229-ով սահմանված կարգով:

Քվեարկության կենտրոնները բաց կլինեն ժամը 7:00-ից մինչև 20:00-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապվել քաղաքային քարտուղարի գրասենյակի հետ՝ (818) 790-8880 հեռախոսահամարով:

---

Տանիա Գարսիա, քաղաքային քարտուղար

Ամսաթիվ՝ 29 հունվարի, 2026 թ.  
Հրապարակված՝ 29 հունվարի, 2026 թ.  
Ad# 10929-037